ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07-ը դեկտեմբերի 2017թ.
ժամը 12^{30}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,

ՀՀ ՊՆ ՀՍՊ վարչության բնակարանային բաժնի առաջատար մասնագետ. ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Կիրակոսյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,

բացակայում է՝

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած «Էյ Դի Էյ Թեք» ՍՊԸ -ի** կողմից ներկայացված հրավերով նախատատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին.

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած «Ինժգարանտ» ՍՊԸ -ի** կողմից ներկայացված հրավերով նախատատեսված փաստաթղթերն առկա են, սակայն առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրում բացակայում են ընթացակարգի հրավերով նախատեսված անշարժ գույքի տեխնիկական բնութագրին կից Հավելված 1-ով սահմանված «Պատշգամբներին» ներկայացվող պահանջների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև նույն հավելվածի 6-րդ կետով նախատեսված «Ինժեներական կոմունիկացիաներին տրվող պահանջները»:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

1.3 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2017թ. դեկտեմբերի 11-ին ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Վ. Գասպարյան
Գնահատող	Տ. Հարոյան
Գնահատող	Ա. Կիրակոսյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

07.12.2017թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08-ը դեկտեմբերի 2017թ.
ժամը 12^{00}

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ինժգարանտ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվեցին 07.12.2017թ.՝ հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատման նիստը շարունակել 08.12.2017թ.:

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչության բնակարանային բաժնի առաջատար մասնագետ. ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Կիրակոսյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
բացակայում էր՝
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. «Ինժգարանտ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը քննարկելու և դրա գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, ինչպես նաև ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝

1. «Ինժգարանտ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը քննարկելու և դրա գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, ինչպես նաև ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Քննարկելով «Ինժգարանտ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված անշարժ գույքի ամբողջական նկարագիրը՝ հանձնաժողովը որոշեց այն գնահատել գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Էյ Դի Էյ Թեք» և «Ինժգարանտ» ՍՊԸ-ների որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից այն չափաբաժիններում, որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Վ. Գասպարյան
Գնահատող	Տ. Հարոյան
Գնահատող	Ա. Կիրակոսյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան